ՆԱԽՆԻՆԵՐԻ ԿԱՆՉԸ

ԱԴՈՆԻՍ

(ըստ Նիկոլայ Կունի)

Ափրոդիտեն սիրում էր Կիպրոսի արքայի որդուն՝ Ադոնիսին: Մահկանացուներից ոչ ոք չէր կարող նրան հավասարվել գեղեցկությամբ. նա մինչև իսկ օլիմպացի աստվածներից էլ գեղեցիկ էր: Ափրոդիտեն ամբողջ ժամանակ Ադոնիսի հետ էր: Ափրոդիտեն Կիպրոսի լեռներում ու անտառներում Ադոնիսի հետ որս էր անում: Նա մոռացել էր և՛ ոսկեղեն զարդարանքներ կրելու, և՛ իր գեղեցկությամբ զբաղվելու մասին:

Այրող արևի տակ թե ամպամած եղանակին նա նապաստակներ, երկչոտ եղջերուներ ու այծյամներ էր որսում՝ խուսափելով ահեղ առյուծների ու վարազների որսից: Ափրոդիտեն Ադոնիսին էլ էր խնդրում խուսափել առյուծի, արջի ու վարազի որսից, որպեսզի հանկարծ դժբախտություն չպատահի: Աստվածուհին հազվադեպ էր մենակ թողնում արքայազնին, իսկ մենակ թողնելիս էլ ամեն անգամ աղաչում էր նրան, որ չմոռանա իր խնդրանքը:

Մի անգամ՝ Ափրոդիտեի բացակայության ընթացքում, Ադոնիսի շները որսի ժամանակ ընկան մի վիթխարի վարազի հետքերի վրա: Նրանք քշեցին գազանին ու գազազած հաչոցներով հալածեցին նրան: Ադոնիսն ուրախացավ, որ այդքան հարուստ որս պիտի ունենա. չէր զգում, որ դա իր վերջին որսն է: Շների հաչոցը գնալով մոտենում էր. ահա թփերի արանքում երևաց ահագին վարազը: Երբ Ադոնիսն ուզում էր իր նիզակով խոցել կատաղած վարազին, հանկարծ վարազը նետվեց նրա վրա և իր սուրսայր ժանիքներով մի ակնթարթում մահացու վիրավորեց Ափրոդիտեի սիրեցյալին: Ադոնիսը մեռավ ստացած վերքից:

Երբ Ափրոդիտեն առավ Ադոնիսի մահվան լուրը, լցվեց անասելի վշտով: Ինքը եկավ Կիպրոսի լեռները՝ գտնելու սիրած պատանու դին: Լեռնային կտրուկ զառիվայրերով, մթամած կիրճերի

միջով, խորունկ անդունդների եզրերով գնում էր Ափրոդիտեն: Սրածայր քարերն ու տատասկների փշերն արյունոտում էին աստվածուհու նուրբ ոտքերը: Արյան կաթիլները ցողվում էին գետնին՝ հետք թողնելով նրա անցած բոլոր վայրերում:

Ի վերջո Ափրոդիտեն գտավ սիրեցյալի դին: Դառնագին լացեց նա վաղամեռիկ գեղեցիկ պատանու համար: Որպեսզի մշտապես պահպանվի Ադոնիսի հիշատակը, աստվածուհին կամեցավ, որ նրա արյունից քնքուշ հողմածաղիկներ բուսնեն: Իսկ այն վայրերում, ուր արյուն էր կաթել Ափրոդիտեի վիրավորված ոտքերից, փարթամ վարդեր բուսնեցին՝ շառագույն, ինչպես աստվածուհու արյունը:

Գթաց ամպրոպային Զևսը սիրո աստվածուհուն: Հրաման արձակեց իր եղբայր Հադեսին ու նրա կնոջը՝ Պերսեփոնեին, որ ամեն տարի Ադոնիսին բաց թողնեն երկիր մեռյալների ստվերների թախծալի թագավորությունից: Այդ ժամանակից ի վեր Ադոնիսը կես տարի մնում է Հադեսի թագավորության մեջ, կես տարի ապրում երկրի երեսին՝ Ափրոդիտե աստվածուհու հետ: Ցնծում է բովանդակ բնությունը, երբ դեպի երկիր է վերադառնում ոսկեշող Ափրոդիտեի սիրեցյալը՝ պատանի Ադոնիսը:

Բառային աշխատանք

1. Բառակազմական վերլուծության ենթարկիր հետևյալ բառերը և հիմնավորիր:

Արքայազն, *զառիվայր*, *շառագույն*, *դառնագին*, *վաղամեռիկ*, *ինչպես*, *աստվածուհի*:

2. Տեքստից դուրս գրիր բառեր և արտահայտություններ, որոնք հեղինակը կիրառում է գործող անձանց, փաստերն ու իրադարձությունները նկարագրելու համար:

3. Բառարանում գտիր տեքստի նորածանոթ բառերի բացատրությունը և դրանցով կազմիր նախադասություններ:

Տեքստային աշխատանք

1. Կարդա՛ և համառոտ վերապատմի՛ր տեքստի բովանդակությունը:
2. Մեկնաբանի՛ր հերոսների արարքների դրդապատճառները՝ հիմնավորելով տեքստից ընտրված հատվածներով:
3. Կազմի՛ր հարցեր կամ պլան կարդացածի շուրջ:
4. Պատմի՛ր ստեղծագործության մեջ պատկերված պատմությունը հերոսներից մեկի անունից:
5. Դրսևորի՛ր վերաբերմունքդ քո սիրած հերոսի նկատմամբ կամ գնահատի՛ր:
6. Գրավոր վերաշարադրի՛ր դեպքերի հաջորդական ընթացքը՝ բացատրելով հերոսի (հերոսների) արարքների պատճառա-հետևանքային կապերը:
7. Գրավոր նկարագրի՛ր շրջապատող միջավայրը, բնությունը, հերոսների արտաքինը և բնավորության որոշ կողմեր՝ կիրառելով մակդիր, փոխաբերություն, համեմատություն:
8. Նյութի համար լսի՛ր համապատասխան երաժշտություն՝ հաղորդվելիք տեքստը առավել գրավիչ դարձնելու համար (տե՛ս դասագրքի QR ծածկագիրը, էջ 32):

Գ–Կ–Ք

1. Մի շարք դեպքերում բառամիջում և բառավերջում գրվում է գ, սակայն թույլ արտասանվում է ք.

ա) ր–ից հետո, օրինակ՝ երգ, թարգմանել (թարգմանիչ, թարգմանություն), կարգ (կարգադրել, օրակարգ), մարգարե, մարգարիտ, պարգև (պարգևատրել),

բ) ձայնավորից հետո, օրինակ՝ ավագ (ավագանի, ավագություն), ձրագ, մարագ, ուրագ, պատարագ, կարագ, օգնել, օգուտ, Օգսեն, գոգ (գոգնոց), շոգ, նորոգել (նորոգում), ոգի, ոռոգել, սուգ, տեգր, էգ (իգական),

գ) ն–ից հետո՝ անգամ:

2. Ք հնչյունը գրվում է գ տառով նաև Գևորգ (Գևորգյան), Մարգար (Մարգարյան), Սարգիս (Սարգսյան), Գրիգոր (Գրիգորյան), Օգսեն հատուկ անուններում:

3. Մյուս բոլոր դեպքերում բաղաձայնների գրությունն ու արտասանությունը համընկնում են, օրինակ՝ գարուն, ագահ, վագր, անհագ, ձագար, թագ, կոտորակ, կատու, սայթաքել, հերքել, արքա, թաքնվել, քուրք, հավաքել, ոչ ոք և այլն:

Առաջադրանքներ

1. Լրացրո՛ւ *գ*, *կ* կամ *ք* տառերը:

Ավա_ ընկերս՝ Օ_սենը, ինձ հրավիրեց՝ արևածա_ը դիտելու: Առավոտ ծե_ին դուրս եկանք գյուղից: Ջի_զա_ ճանապարհով մե_ենան մեզ տանում էր դեպի Արա_ած լեռը: Երեք հո_ի էինք՝ ես, Օ_սենը և մեր ավա_ ընկեր Սար_իսը: Հեռվում, լեռան կատարից ճի_ գործելով, իր գլուխը հանեց արփին և ար_այավայել բարևեց աշխարհին: Առավոտյան եղանակը ցուրտ էր, և մենք հա_անք մեր տա_ հա_ուստները: Քիչ հետո նախաճաշեցինք. մեզ հետ վերցրել էինք կարա_ և թել պանիր: Ճի_ ու ջանքով ելան_ լեռան կատարը՝ ճամփին կատա_ներ անելով: Վերել_ը օ_տավետ էր, չնայած վերջում լավ հո_նել էինք: Ուշադիր զննում էինք դաշտի մու_ ծաղիկներն ու զմայլվում Քարե լճի ալի_նե–

րով: Մեր հայրենի եզեր_ն ասես թա_ադիր գեղեցկուհի լիներ: Հետո պիտի գյուղ իջնեինք, որ մասնակցեինք Թար_մանիչ եկեղեցու պատարա_ին:

2. Գրի՛ր հետևյալ բառերի հոմանիշները: Այդ բառերում գրվում է *գ* կամ *ք*:

Վեհ–, ջանք–, տոթ–, աջակցել–, մառախուղ–, լուսաբաց–, թագավոր–, ձյունամրրիկ–:

3. Արմատների միացումով կազմի՛ր նոր բառեր:

Խումբ + *երգ*, *ձիգ* + *ժամ*, *արքա* + *նիստ*, *վագր* + *ձի*, *զոր*(ք) + *հանդես*, *երգ* + *հանդես*, *վեր*(ք) + *կապ*, *հան*(ք) + *փոր*, *սուգ* + *կիր*, *հոգ*(ս) + *պար*, *շոգ*(ի)+ *նավ*, *գույգ* + *երգ*, *շաբանակ* + *գույն*, *բուք* + *խեղդ*, *մաքուր* + *գիր*, *վար*(ք) + *գիր*:

4. Միգահանդես, երգահանդես, զորահանդես բառերով նախադասություններ կազմիր:

5. Գրի՛ր չորսական անուն և ազգանուն, որոնք վերաբերում են *գ*–*կ*–*ք* բաղաձայնների ուղղագրությանը:

6. Հայաստանի գետերի անունները դասավորի՛ր այբբենական կարգով:

Արաքս, *Եղեգիս*, *Գետառ*, *Արգիճի*, *Գավառագետ*, *Իշխանագետ*, *Ձկնագետ*, *Ձորագետ*:

7. Հաղորդո՛ւմ պատրաստիր «Հայաստանում սիգը ամենատարածված ձկնատեսակն է» խորագրով (խմբային աշխատանք):